Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն N 01

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության լիցենզավորման հանձնաժողովի նիստի

<<15>> հունվարի 2024թ. ք. Երևան

2024 թվականի հունվարի 15-ին տեղի ունեցավ ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության լիցենզավորման հանձնաժողովի նիստը:

Հանձնաժողովի 6 անդամներից նիստին մասնակցում էին՝

Ա. Խաչատրյան	Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության իրավաբանական վարչության պետ, հանձնաժողովի նախագահի տեղակալ
Ա. Ստեփանյան	Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ավտոմոբիլային տրանսպորտի քաղաքականության, լիցենզավորման և թույլտվությունների վարչության լիցենզավորման և թույլտվությունների բաժնի պետ, հանձնաժողովի անդամ
Խ. Սողոմոնյան	Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ավտոմոբիլային տրանսպորտի քաղաքականության, լիցենզավորման և թույլտվությունների վարչության պետ, հանձնաժողովի անդամ
Տ. Գասպարյան	Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության երկաթուղային և ջրային տրանսպորտի քաղաքականության վարչության պետի տեղակալ, հանձնաժողովի անդամ
Ռ. Այվազյան	Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ավտոմոբիլային տրանսպորտի քաղաքականության, լիցենզավորման և թույլտվությունների վարչության ավտոմոբիլային տրանսպորտի քաղաքականության բաժնի պետ, հանձնաժողովի անդամ:

Նիստը նախագահում էր հանձնաժողովի նախագահի տեղակալ Ա. Խաչատրյանը: Նիստից բացակայում էր հանձնաժողովի նախագահ Ա. Սիմոնյանը:
Նիստն արձանագրում էր Ա. Ստեփանյանը:

Օ Ր Ա Կ Ա Ր Գ Ո Ւ Մ

1.Տրանսպորտային միջոցների տեխնիկական զննության գործունեության լիցենզիա և ներդիր տրամադրելու համար ներկայացված 3 հայտերի քննարկում:

2.Անհատ ձեռնարկատերերի և կազմակերպությունների կողմից մարդատար-տաքսի ավտոմոբիլներով ուղևորափոխադրումների կազմակերպման լիցենզիան և լիցենզիայի ներդիրն/երն/ ուժը կորցրած ճանաչելու համար ներկայացված 2 հայտերի քննարկում:

1. Տրանսպորտային միջոցների տեխնիկական զննության գործունեության իրականացման լիցենզիա և ներդիր տրամադրելու համար ներկայացված հայտի քննարկում

1.1 Քննարկվեց՝ «ԱՎՏՈՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության /այսուհետ՝ Կազմակերպություն/ 2023 թվականի դեկտեմբերի 21-ի հայտը և հայտին կից ներկայացված փաստաթղթերը և 2023 թվականի

դեկտեմբերի 29-ին և 2024 թվականի հունվարի 15-ին ի լրումն ներկայացված նյութերը՝ տրանսպորտային միջոցների տեխնիկական զննության գործունեության լիցենզիա և թեթև տրանսպորտային միջոցների հոսքագծի ներդիր տրամադրելու մասին:

Ա. Ստեփանյանը ներկայացրեց, որ Կազմակերպությունը 2023 թվականի դեկտեմբերի 21-ին ներկայացրել է հայտ և հայտին կից փաստաթղթեր՝ տրանսպորտային միջոցների տեխնիկական զննության գործունեության լիցենզիա և թեթև տրանսպորտային միջոցների հոսքագծի ներդիր տրամադրելու մասին՝ ՀՀ, ք. Երևան, Դավթաշեն 2-րդ թաղամաս 18/4 գործունեության վայրում:

Ի պատասխան ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության 26.12.2023 թ. ՈԱՍ/25.1/39938-2023 գրության՝ Կազմակերպությունը 29.12.2023թ. և 15.01.2024թ. ներկայացրել է լրացուցիչ նյութեր՝ վերացնելով հայտին կից փաստաթղթերում առկա թերությունները:

Կազմակերպության գործունեության վայրում ուսումնասիրությունն իրականացվել է Լիցենզավորման հանձնաժողովի անդամներ Խ. Սողոմոնյանի, Ա. Ստեփանյանի և Տ. Գասպարյանի կողմից:

Լիցենզավորման հանձնաժողովի անդամները ուսումնասիրեցին ներկայացված փաստաթղթերը:

Հարցի քննարկմանը մասնակցեցին լիցենզավորման հանձնաժողովի՝ նիստին մասնակցող բոլոր անդամները. տեղի ունեցավ փակ գաղտնի քվեարկություն, քվեարկության թերթիկները փոխանցվեց հանձնաժողովի քարտուղար Ա. Ստեփանյանին:

Ա. Ստեփանյանը հայտարարեց քվեարկության արդյունքները և արձանագրվեց՝

«ԱՎՏՈՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՍՊԸ	5 կողմ, 0 դեմ

Որոշեցին՝

Ներկայացված հայտը և հայտին կից ներկայացված փաստաթղթերը համապատասխանում են ՀՀ կառավարության 2021 թվականի սեպտեմբերի 24-ի N 1565-Ն և 2007 թվականի փետրվարի 15-ի N 690-Ն որոշումներով հաստատված կարգերի պահանջներին՝ ենթակա է բավարարման:

Համաձայն «Լիցենզավորման մասին» օրենքի 40-րդ հոդվածի 9-րդ մասի՝ եզրակացությունը ներկայացնել Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարին:

1.2 Քննարկվեց՝ «ԱՍՄԱՆ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության /այսուհետ՝ Կազմակերպություն/ 2024 թվականի հունվարի 5-ի հայտը և հայտին կից ներկայացված փաստաթղթերը՝ տրանսպորտային միջոցների տեխնիկական զննության գործունեության լիցենզիա և ունիվերսալ հոսքագծի ներդիր տրամադրելու մասին:

Ա. Ստեփանյանը ներկայացրեց, որ Կազմակերպությունը 2024 թվականի հունվարի 5-ին ներկայացրել է հայտ և հայտին կից փաստաթղթեր՝ տրանսպորտային միջոցների տեխնիկական զննության գործունեության լիցենզիա և ունիվերսալ հոսքագծի ներդիր տրամադրելու մասին՝ ՀՀ, Վայոց ձորի մարզ, համայնք Վայք, ք. Վայք, Վ. Համբարձումյան փողոց 7 գործունեության վայրում:

Կազմակերպության գործունեության վայրում ուսումնասիրությունն իրականացվել է Վայոց ձորի մարզպետարանի աշխատակազմի մասնագետների կողմից, որի վերաբերյալ տեղեկատվությունը ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն ներկայացվել է 12.01.2024թ. Մ/2330-2024 գրությամբ:

Լիցենզավորման հանձնաժողովի անդամները ուսումնասիրեցին ներկայացված փաստաթղթերը:

Հարցի քննարկմանը մասնակցեցին լիցենզավորման հանձնաժողովի՝ նիստին մասնակցող բոլոր անդամները. տեղի ունեցավ փակ գաղտնի քվեարկություն, քվեարկության թերթիկները փոխանցվեց հանձնաժողովի քարտուղար Ա. Ստեփանյանին:

Ա. Ստեփանյանը հայտարարեց քվեարկության արդյունքները և արձանագրվեց՝

«ԱՍՄԱՆ» ՍՊԸ	5 կողմ, 0 դեմ

Որոշեցին՝

Ներկայացված հայտը և հայտին կից ներկայացված փաստաթղթերը համապատասխանում են ՀՀ կառավարության 2021 թվականի սեպտեմբերի 24-ի N 1565-Ն և 2007 թվականի փետրվարի 15-ի N 690-Ն որոշումներով հաստատված կարգերի պահանջներին՝ ենթակա է բավարարման:

Համաձայն «Լիցենզավորման մասին» օրենքի 40-րդ հոդվածի 9-րդ մասի՝ եզրակացությունը ներկայացնել Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարին:

1.3 Քննարկվեց՝ «ՎԵԴՈՒ ԲԵՌՆԱՌԻՂԵՎՈՐԱՏԱՐ ԱՎՏՈՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության /այսուհետ՝ Կազմակերպություն/ 2023 թվականի դեկտեմբերի 23-ի հայտը և հայտին կից ներկայացված փաստաթղթերը և 2024 թվականի հունվարի 9-ին և հունվարի 15-ին ի լրումն ներկայացված նյութերը՝ տրանսպորտային միջոցների տեխնիկական զննության գործունեության լիցենզիա և ունիվերսալ հոսքագծի ներդիր տրամադրելու մասին:

Ա. Ստեփանյանը ներկայացրեց, որ Կազմակերպությունը 2023 թվականի դեկտեմբերի 23-ին ներկայացրել է հայտ և հայտին կից փաստաթղթեր՝ տրանսպորտային միջոցների տեխնիկական զննության գործունեության լիցենզիա և ունիվերսալ հոսքագծի ներդիր տրամադրելու մասին՝ Արարատի մարզ, ք. Վեդի, Արարատյան փողոց 113 գործունեության վայրում:

Ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրությունից հետո ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության 2023 թվականի դեկտեմբերի 26-ի ԱՍ/25.1/39967-2023 գրությամբ Կազմակերպությանը տեղեկացվել է հայտում և հայտին կից փաստաթղթերում առկա թերությունների վերաբերյալ, մասնավորապես առ այն, որ հայտին կից փաստաթղթերում բացակայում է ՀՀ, Արարատի մարզ, ք. Վեդի, Արարատյան փողոց 113 հասցեում գտնվող շինություններից տեխնիկական զննության գործունեության համար նախատեսված տարածքի (գործունեության վայրի) հատակագիծը, ինչը լիցենզավորող մարմնին հնարավորություն չի տալիս ստուգելու Կազմակերպության ներկայացրած տարածքի համապատասխանությունը ՀՀ կառավարության 2007 թվականի փետրվարի 15-ի N 690-Ն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետով հաստատված կարգի 15-րդ կետով սահմանված պահանջներին (լայնություն, երկարություն, մուտք-ելք), բացակայում են ՀՀ կառավարության 2021 թվականի սեպտեմբերի 24-ի N 1565-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի հավելվածի ցանկ N 2-ով սահմանված՝ տեխնիկական զննության կայաններում տրանսպորտային միջոցների տեխնիկական զննության ժամանակ դրանց վիճակի ստուգման համար օգտագործվող տեխնիկական արատորոշման միջոցների, մասնավորապես՝ արգելակային համակարգի, ղեկային վարման գումարային խաղի չափման, ձողակարկինի, արտաքին լուսային սարքերի լույսի ստուգման, դողերի ճնշաչափերի հավաքածուի, դողի պահպանաշերտի նախշերի խորության չափիչի, գազաանալիզատորի, ծխաչափի, հոսաորոնիչի, տրանսպորտային միջոցների ղեկային վարման շարժաբերի և կախոցի վիճակի ստուգման ստենդի տեխնիկական բնութագրերը պարունակող տեխնիկական անձնագրերը և Չափագիտության ազգային մարմնի կողմից տրամադրված ստուգաչափման վկայականները և կոմպրեսորի և նվազագույնը 640x320 մատրիցայի կետայնությամբ թվային ինֆրակարմիր տեսախցիկի և ավտոմեխանիկի գործիքների հավաքակազմի առկայության փաստը հավաստող նյութերը:

Միաժամանակ Կազմակերպությանը տեղեկացվել է, որ ըստ «Լիցենզավորման մասին» օրենքի 29-րդ հոդվածի 5-րդ մասի՝ եթե պատշաճ ձևով նախազգուշացումը լիցենզավորող մարմնի կողմից ուղարկվելու օրվան հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում հայտատուն չի վերացնում հայտում կամ կից փաստաթղթերում առկա ոչ էական թերությունները կամ չի ներկայացնում անհրաժեշտ փաստաթղթեր կամ նյութեր, ներկայացված հայտը ենթակա է մերժման:

Կազմակերպությունը 2024 թվականի հունվարի 9-ին և հունվարի 15-ին ներկայացրել է լրացուցիչ նյութեր, սակայն ամբողջովին չի վերացրել 2023 թվականի դեկտեմբերի 26-ի ԱՍ/25.1/39967-2023 գրությամբ նշված թերությունները, մասնավորապես՝ չի ներկայացրել ՀՀ, Արարատի մարզ, ք. Վեդի, Արարատյան փողոց 113 հասցեում գտնվող շինություններից տեխնիկական զննության գործունեության համար նախատեսված տարածքի (գործունեության վայրի) հատակագիծը, տրանսպորտային միջոցների տեխնիկական զննության ժամանակ դրանց վիճակի ստուգման համար օգտագործվող տեխնիկական արատորոշման միջոցների տեխնիկական բնութագրերը պարունակող տեխնիկական անձնագրերը և կոմպրեսորի և նվազագույնը 640x320 մատրիցայի կետայնությամբ թվային ինֆրակարմիր տեսախցիկի առկայության փաստը հավաստող նյութերը:

Լիցենզավորման հանձնաժողովի անդամները ուսումնասիրեցին ներկայացված փաստաթղթերը:

Հարցի քննարկմանը մասնակցեցին լիցենզավորման հանձնաժողովի՝ նիստին մասնակցող բոլոր անդամները, տեղի ունեցավ փակ գաղտնի քվեարկություն, քվեարկության թերթիկները փոխանցվեց լիցենզավորման հանձնաժողովի քարտուղար Ա. Ստեփանյանին:

Ա. Ստեփանյանը հայտարարեց քվեարկության արդյունքները և արձանագրվեց՝

«ՎԵԴՈՒ ԲԵՌՆԱՌԻՂԵՎՈՐԱՏԱՐ ԱՎՏՈՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ» ՍՊԸ	0 կողմ, 5 դեմ

Որոշեցին՝

Ներկայացված հայտը և հայտին կից ներկայացված փաստաթղթերը չեն համապատասխանում ՀՀ կառավարության 2007 թվականի փետրվարի 15-ի N 690-Ն և ՀՀ կառավարության 2021 թվականի սեպտեմբերի 24-ի N 1565-Ն որոշումներով հաստատված կարգերի պահանջներին՝ ենթակա է մերժման:

Համաձայն «Լիցենզավորման մասին» օրենքի 40-րդ հոդվածի 9-րդ մասի՝ եզրակացությունը ներկայացնել Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարին:

2. Անհատ ձեռնարկատերերի և կազմակերպությունների կողմից մարդատար-տաքսի ավտոմոբիլներով ուղևորափոխադրումների կազմակերպման լիցենզիան և լիցենզիայի ներդիր/ներ/ն ուժը կորցրած ճանաչելու համար ներկայացված դիմումի քննարկում:

2.1 Քննարկվեց՝

Անհատ ձեռնարկատեր ԱՐԹՈՒՐ ՀՈՎՍԵՓՅԱՆԻ 2023 թվականի դեկտեմբերի 26-ի դիմումը՝ անհատ ձեռնարկատերերի և կազմակերպությունների կողմից մարդատար-տաքսի ավտոմոբիլներով ուղևորափոխադրումների կազմակերպման ՏԾ N 05357 լիցենզիան և լիցենզիայի N 00001-ից N 00027 ներդիրներն ուժը կորցրած ճանաչելու մասին:

Ա. Ստեփանյանը՝

Ներկայացրեց անհատ ձեռնարկատեր ԱՐԹՈՒՐ ՀՈՎՍԵՓՅԱՆԻ 2023 թվականի դեկտեմբերի 26-ի դիմումը՝ անհատ ձեռնարկատերերի և կազմակերպությունների կողմից մարդատար-տաքսի ավտոմոբիլներով ուղևորափոխադրումների կազմակերպման ՏԾ N 05357 լիցենզիան և լիցենզիայի N 00001-ից N 00027 ներդիրներն ուժը կորցրած ճանաչելու մասին:

Լիցենզավորման հանձնաժողովի անդամներն ուսումնասիրեցին դիմումը և դիմումին կից ներկայացված փաստաթղթերը՝ լիցենզիայի և ներդիրների բնօրինակները:

Հարցի քննարկմանը մասնակցեցին լիցենզավորման հանձնաժողովի՝ նիստին մասնակցող բոլոր անդամները, տեղի ունեցավ փակ գաղտնի քվեարկություն, քվեարկության թերթիկները փոխանցվեց լիցենզավորման հանձնաժողովի անդամ՝ պատասխանատու քարտուղար՝ Ա. Ստեփանյանին:

Ա. Ստեփանյանը

Հայտարարեց քվեարկության արդյունքները և արձանագրվեց՝

ԱՁ ԱՐԹՈՒՐ ՀՈՎՍԵՓՅԱՆ	5 կողմ, 0 դեմ

Որոշեցին՝ ըստ «Լիցենզավորման մասին» օրենքի 40-րդ հոդվածի 9-րդ մասի՝ եզրակացությունը ներկայացնել Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարին:

2.2 Քննարկվեց՝

Անհատ ձեռնարկատեր ԱՐՄԱՆ ՊԵՏՐՈՍԻ ՊԵՏՐՈՍՅԱՆԻ 2023 թվականի հունվարի 8-ի դիմումը՝ անհատ ձեռնարկատերերի և կազմակերպությունների կողմից մարդատար-տաքսի ավտոմոբիլներով ուղևորափոխադրումների կազմակերպման ՏԾ N 05446 լիցենզիան և լիցենզիայի N 00001 ներդիրն ուժը կորցրած ճանաչելու մասին:

Ա. Ստեփանյանը՝

Ներկայացրեց անհատ ձեռնարկատեր ԱՐՄԱՆ ՊԵՏՐՈՍԻ ՊԵՏՐՈՍՅԱՆԻ 2023 թվականի հունվարի 8-ի դիմումը՝ անհատ ձեռնարկատերերի և կազմակերպությունների կողմից մարդատար-

տաքսի ավտոմոբիլներով ուղևորափոխադրումների կազմակերպման ՏԾ N 05446 լիցենզիան և լիցենզիայի N 00001 ներդիրն ուժը կորցրած ճանաչելու մասին:

Լիցենզավորման հանձնաժողովի անդամներն ուսումնասիրեցին դիմումը և դիմումին կից ներկայացված փաստաթղթերը՝ լիցենզիայի և ներդիրների բնօրինակները:

Հարցի քննարկմանը մասնակցեցին լիցենզավորման հանձնաժողովի՝ նիստին մասնակցող բոլոր անդամները, տեղի ունեցավ փակ գաղտնի քվեարկություն, քվեարկության թերթիկները փոխանցվեց լիցենզավորման հանձնաժողովի անդամ՝ պատասխանատու քարտուղար՝ Ա. Ստեփանյանին:

Ա. Ստեփանյանը

Հայտարարեց քվեարկության արդյունքները և արձանագրվեց՝

ԱՁ ԱՐՄԱՆ ՊԵՏՐՈՍԻ ՊԵՏՐՈՍՅԱՆ	5 կողմ, 0 դեմ

Որոշեցին՝ ըստ «Լիցենզավորման մասին» օրենքի 40-րդ հոդվածի 9-րդ մասի՝ եզրակացությունը ներկայացնել Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարին:

ՀՀ տարածքային կառավարման և
ենթակառուցվածքների նախարարության
լիցենզավորման հանձնաժողովի
նախագահի տեղակալ Ա. Խաչատրյան

ՀՀ տարածքային կառավարման և
ենթակառուցվածքների նախարարության
լիցենզավորման հանձնաժողովի քարտուղար Ա. Ստեփանյան